

Հաստատում եմ՝

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի

Կոլեգիալ կառավարման խորհրդի

թիվ 21.05.06.2024թ. նիստում

խորհրդի նախագահ՝  Ա. Աթոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
/պետական ոչ առևտրային կազմակերպություն/**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ
ԱՊԱՀՈՎԱՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

Ք. Գյումրի
2024թ.

ԸՆԴՀԱՆՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Կրթության որակի ներքին ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:
- 1.2 Կենտրոնն ունի իր պատկերանիշը (LOGO):
- 1.3 Սույն կանոնակարգի մեջ լրացումներն ու փոփոխությունները՝ Կենտրոնի աշխատախմբի առնվազն 1/2-ի առաջարկությամբ, հաստատվում են քոլեջի կառավարման խորհրդի կողմից և վավերացվում քոլեջի տնօրենի կողմից:
- 1.4 Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է քոլեջի միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և քոլեջի կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 1.5 Կենտրոնը սույն կանոնակարգով սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է քոլեջի այլ ստորաբաժանումների և արտաքոլեջային տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:
- 1.6 Կենտրոնը քոլեջի ստորաբաժանում է, որն անմիջապես ենթարկվում է քոլեջի տնօրենին:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Կենտրոնի հիմնական նպատակը՝

- 2.1 Քոլեջում որակի ներքին կառավարման շարժիչ սկզբունքի ձևավորումը և որակի կառավարման ու ապահովման մեխանիզմների գործադրումն է՝ որակի արտաքին ապահովման չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան,
- 2.2 Որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է. որակի շարունակական բարելավման մշակույթը քոլեջի ՈԱ քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, որը կոչված է ապահովելու կրթական գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ: Դրա հիմնական նպատակն է ստեղծել և գործադրել աջակցող մեխանիզմներ՝ քոլեջի կրթության որակի կայուն և շարունակական բարձրացման համար, ինչպես նաև նախադրյալներ՝ որակի մշակույթի անշեղ զարգացման նպատակով: Քոլեջը որակի շարունակական բարձրացման իր ռազմավարությունն իրականացնելիս ելնում է հետևյալ սկզբունքներից.
 - ՈԱ գործընթացները կանոնակարգված են, մշտադիտարկվում և պարբերաբար վերանայվում են,
 - ՈԱ գործընթացները հիմնվում են որակի մշտադիտարկման (մոնիթորինգի) զեկույցների, ուսանողների, շրջանավարտների և

գործատուների հետադարձ կապի և շրջանավարտների զբաղվածության վիճակագրական տվյալների վրա:

Քոլեջի որակի շարունակական բարձրացման մեխանիզմը հիմնված է շրջափոխային մի գործընթացի վրա, որը բաղկացած է հետևյալ չորս հիմնական փուլերից՝

1. Պլանավորում. սահմանվում են հիմնական խնդիրները և չափելի ակնկալվող վերջնարդյունքները:
2. Իրականացում. կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպաստակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները:
3. Գնահատում. ստուգվում և չափվում են փաստացի ստացված արդյունքները սպասվածի համեմատությամբ:
4. Բարելավում. մշակվում և պլանավորվում են լրացուցիչ միջոցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և նախանշված վերջնարդյունքներն իրականացման հաջորդ փուլում ձեռք բերելու համար:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 3.1 Քոլեջի որակի ներքին ապահովման ձեռնարկի/քաղաքականություն, ռազմավարություն/ մշակում և պարբերական վերանայում, ինչպես նաև վարչական աջակցություն բոլոր մակարդակներում՝ դրանց իրագործման հետևողական մշտադիտարկում, խնդիրների վերհանում, ներկայացում և քննարկում (թերությունների պատճառների, բարելավման մեխանիզմների և այլնի):
- 3.2 Կրթության որակի կառավարման ու ապահովման կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ապահովում:
- 3.3 Քոլեջի առաքելության իրագործման համար անհրաժեշտ պայմանները ձևավորում՝ կրթության որակի ապահովման ուղղությամբ:
- 3.4 Քոլեջում որակի մշակույթի տարածման և բարելավման խթանում:
- 3.5 Քոլեջի ստորաբաժանումների/ամբիոնների գործունեության աջակցում և փոխկապակցված գործունեության ծավալում՝ կրթության որակի ապահովման տեսանկյունից:
- 3.6 Կրթության որակի համար քոլեջի հաշվետվողականության ապահովում ներքին և արտաքին շահակիցների առջև:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կենտրոնը՝

- 4.1 Համապատասխան ստորաբաժանումների հետ մշակում է քոլեջի որակի կառավարման ու ապահովման կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշչային փաստաթղթերը,
- 4.2 Մշակում, իրականացնում և մշտապես բարելավում է որակի ներքին ապահովման գործընթացները, ներկայացնում տեղեկատվություն դրանց արդյունքների մասին,
- 4.3 Կազմակերպում և անցկացնում է կրթության որակի կառավարման, ապահովման և գնահատման վերաբերյալ խորհրդակցություններ և սեմինարներ,
- 4.4 Աջակցում է էլեկտրոնային տվյալների հենքի ստեղծման և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպմանը որպես կրթության որակի ապահովման աշխատանքների կազմակերպման հիմնական գործիքներ,
- 4.5 Մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող, համակարգող և կրթության գործընթացի առանձին փուլերին վերաբերող նորմատիվային փաստաթղթերի պատրաստմանը՝ քոլեջի ռազմավարության պահանջներին համապատասխան,
- 4.6 Աջակցում է քոլեջի համապատասխան ստորաբաժանումների հաշվետվողականությանը՝ գործունեության որակի տեսանկյունից,
- 4.7 Մշակում և իրականացնում է դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմը (հարցումներ, ֆոկուսխմբեր և այլն) և ընթացակարգերը,
- 4.8 Համագործակցում է քոլեջի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև տարբեր խորհուրդների հետ և աջակցում նրանց աշխատանքներին,
- 4.9 Աջակցում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման և նոր կրթական ծրագրերի մշակման գործընթացների կազմակերպմանը, ստուգում է նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,
- 4.10 Աջակցում է քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացին, համապատասխան զեկույցի պատրաստմանը և հաջորդող գործողությունների պլանավորմանն ու վերահսկմանը:

5. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

- 5.1 Կենտրոնը կազմված է որակի ներքին ապահովման պատասխանատուից, աշխատախմբից և կրթության որակի ապահովման կենտրոնի աջակից ուսանողներից:
- 5.2 Կենտրոնի կազմը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում տնօրենը՝ կենտրոնի պատասխանատուի առաջարկությամբ և իր նախաձեռնությամբ:

6. Կենտրոնի պատասխանատուն

Որակի ներքին ապահովման կենտրոնը գլխավորում է պատասխանատուն, որին նշանակում և ազատում է քոլեջի տնօրենը:

Կենտրոնի պատասխանատուն պարտավոր է՝

- 6.1 ղեկավարել և վերահսկել կենտրոնի աշխատախմբի աշխատանքները,
- 6.2 պատասխանատու է կենտրոնի աշխատանքների որակի և նրա առջև դրված խնդիրների ու գործառույթների կատարման համար,
- 6.3 անցկացնել որակի ապահովման գծով տեղեկատվության բարձրացման տարաբնույթ հանդիպումներ,
- 6.4 ստեղծել ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմներ (կարգ, հարցաթերթիկ),
- 6.5 ստեղծել շահակիցների կողմից քոլեջի գնահատման մեխանիզմներ և գործիքակազմ,
- 6.6 մշակել կրթական ծրագրերի որակի գնահատման նոր մեխանիզմներ,
- 6.7 ձևավորել որակի ներքին ապահովմանն ուղղված ուսանողական խումբ,
- 6.8 ներդնել ուսանողների հետ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների համակարգ,
- 6.9 կենտրոնի պատասխանատուն աշխատանքների համար հաշվետու է քոլեջի տնօրենին,
- 6.10 կենտրոնի պատասխանատուի բացակայության կամ տեղը թափուր մնալու դեպքում փոխարինում է տնօրենի կողմից նշանակված այլ աշխատակից:

7. Կենտրոնի աշխատախումբ

- 7.1 Կենտրոնի աշխատախմբի անդամներն ի պաշտոնե քոլեջի ստորաբաժանումների /ամբիոնների/ ղեկավարներն են:
- 7.2 Աշխատախումբը ունի հետևյալ գործառույթները՝
1. վերանայել քոլեջի ներքին գործող և չգործող կարգերը/կանոնակարգեր, ընթացակարգեր/ըստ ռազմավարական ծրագրի առաքելության և նպատակների,
 2. անհրաժեշտության դեպքում մշակել և հաստատման ներկայացնել նոր ընթացակարգեր և կանոնակարգեր,
 3. պատասխանատվություն կրել ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև քոլեջի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար,

4. հետևել, որ ուսանողների և դասախոսների շահերը արտահայտող կարգերը տեղադրվեն համապատասխան ցուցատախտակներին,
 5. կազմակերպել յուրաքանչյուր կիսամյակում առնվազն մեկ անգամ ուսանողների կողմից դասախոսների գնահատման գործընթացը,
 6. պարզել ուսանողների և դասախոսների բավարարվածությունը օժանդակ ծառայություններից (քոլեջի ենթակառուցվածքներից գրադարանի, համակարգիչների ու համացանցի մատչելիության, լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքից) հարցումների միջոցով,
 7. ներկայացնել դասախոս-ուսանող համատեղ աշխատանքները:
- 7.4 Իր վրա դրված խնդիրների կատարման անհրաժեշտությունից ելնելով, իրավունք ունի.

1. հրավիրել կրթության ՈԱ կենտրոնի նիստեր և կազմակերպել հարցերի քննարկումներ,
2. նիստերին հրավիրել ստորաբաժանման աշխատակիցների կամ որակի ապահովման ներքին կամ արտաքին շահակիցների,
3. լսել որակի կառավարման հարցերի շուրջ առանձին ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,
4. խմբի իրավասությանը ենթակա աշխատանքների վերաբերյալ հարցեր ներկայացնել տնօրենությանն ու Քոլեջի կառավարման խորհրդին,
5. հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել որակի ներքին համակարգի շարու-նակական բարելավմանն ուղղված առաջարկություններ և նախագծեր:

8. Կրթության որակի ներքին ապահովման կենտրոնի աջակից ուսանողներ

Կենտրոնի աջակից ուսանողների խումբը կազմվում է նախագահից և քոլեջում ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության մեկական /կամ մի քանի/ ուսանողից և ցանկության դեպքում շրջանավարտից:

Ուսանողների խումբը ղեկավարում է նախագահը, որը ի պաշտոնե քոլեջի ուսխորհրդի նախագահն է:

Կենտրոնի աջակից ուսանողների խմբի անդամները ընտրվում են կամավորության սկզբունքով:

Կենտրոնի աջակից ուսանողների խումբ պարտավոր է՝

8. ուսանողներին ծանոթացնել իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություններին,
9. կազմակերպել ուսանողական քննարկումներ կրթության որակը խոչընդոտող հանգամանքները բացահայտելու և դրանք վերացնելու նպատակով, դրա վերաբերյալ որակի կենտրոն ներկայացնել համապատասխան առաջարկություններ, մասնակցել դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը,
10. աջակցել մշտադիտարկման մեթոդիկայի մշակմանը,
11. մասնակցել դասախոսների գնահատման արդյունքների վերլուծությանը, ներկայացնել համապատասխան նկատառումներ, առաջարկություններ, դիտողություններ:

Որակի ներքին ապահովման կենտրոնի կազմի անդամները պետք է տիրապետեն հետևյալ գիտելիքներին և կարողություններին.

- իմանան որակի ապահովման չափանիշները և ուղենիշները,
- տիրապետեն հավատարմագրման չափանիշներին և չափորոշիչներին,
- իմանան կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը,
- ունենան քննադատական մտածողություն, որակական և քանակական վերլուծություններ կատարելու հմտություններ,
- ունենան նորմատիվային, ուսումնամեթոդական և այլ փաստաթղթերի հետ աշխատելու կարողություն,
- ունենան վարչական կամ դասախոսական աշխատանքի փորձ:

Իրենց գործունեության մեջ անդամները ղեկավարվում են.

- ՀՀ կրթության ոլորտը կարգավորող օրենքներով և օրենսդրական ակտերով,
- քոլեջի կանոնադրություններով և այլ նորմատիվային փաստաթղթերով,
- քոլեջի տնօրենի հրամաններով, հանձնարարականներով, կարգադրություններով,
- քոլեջի որակի ապահովման քաղաքականության դրույթներով:

Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Օրենսդրական, կանոնադրական փոփոխությունների դեպքում վերանայել և լրամշակել կանոնակարգը՝ ըստ անհրաժեշտության: